ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

18 ՓԵՏՐՎԱՐԻ 2025թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 10 անդամներ:

Բացակա էին՝ Հարութ Թերջյանը, Արթուր Հովհաննիսյանը, Եպրաքսի Մալխասյանը, Հրաչիկ Միերյանը, Մյասնիկ Պողոսյան ը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Նորային Հակոբյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Արայիկ Ավետիսյանը

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 14.11.2022 ԹՎԱԿԱՆԻ N 54-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԱՅԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, « Նորմատիվ իրավական ակտերի մասին » ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Արագածոտնի մարզպետարանից 25.12.2024 թվականին ստացված N 01/1/08585-2024 գրությունը, **համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու կանոնակարգը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու 14.11.2022 թվականի N 54-Ն որոշումը :

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 13-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԱՇԵՆ ԳԵՂԱԴԻՐ ՀՆԱԲԵՐԴ ԳԵՂԱՁՈՐ ԲԵՐՔԱՌԱՏ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ԵՎ ԼԵՌՆԱՊԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԳԱԶԱՖԻԿԱՑՄԱՆ ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱԶՄՎԱԾ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՄԱՆ ԵՎ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԵՍԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննության» ՓԲԸ-ի կողմից Ծաղկահովիտ համայնքի Նորաշեն, Գեղադիր, Հնաբերդ, Գեղաձոր, Բերքառատ, Ծաղկահովիտ և Լեռնապար բնակավայրերի գազաֆիկացման ներքին ցանցի կառուցման նպատակով կազմված նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ենթարկման և եզրակացության տրամադրման անհրաժեշտության մասին Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի՝ առաջարկությունը, **համայնքի ավագանին որոշում է՝**

1. ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Նորաշեն, Գեղադիր, Հնաբերդ, Գեղաձոր, Բերքառատ, Ծաղկահովիտ և Լեռնապար բնակավայրերի գազաֆիկացման ներքին ցանցի կառուցման նպատակով կազմված նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ենթարկման և եզրակացության տրամադրման համար համայնքի բյուջեից հատկացնել 480.000 / չորս հարյուր ութսուն հազար / ՀՀ դրամ:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից :

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 17-Ն)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 23.12.2024 ԹՎԱԿԱՆԻ N 127-Ն N 128-Ն ԵՎ N 129-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԱՅԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի պահանջներով, **համայնքի ավագանին որոշում է՝**

1. ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու 23.12.2024 թվականի N 127-Ն, N 128-Ն և N 129-Ն որոշումները ճանաչել անվավեր:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 18-Ն)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-րդ կետի և 82.1-րդ հոդվածի պահանջներով, Ծաղկահովիտ **համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հաստատել ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի զարգացման հնգամյա ծրագրի շրջանակներում իրականացվող 2025թ. տարեկան աշխատանքային պլանը /ՏԱՊ/ ըստ ոլորտների ՝ համաձայն N1 հավելվածի:

2. Համայնքի ղեկավարին՝ ծրագրերի ցանկն ընդգրկել համայնքի 2025թ. գնման պլանում այն սահմանված կարգով հրապարակելու համար:

3. Թույլատրել համայնքի ղեկավարին՝

ա/ ծրագրի առանձին հատվածների իրականացման անհնարինության կամ խնայողությունների դեպքում նախատեսված գումարն ուղղել առաջնահերթ և հրատապ լուծում պահանջող այլ խնդիրների լուծման:

բ/ Խիստ անհրաժեշտություն առաջանալու և ֆինանսական հնարավորության դեպքում ծրագրի համար նախատեսված գումարի մինչև 20%-ի չափով կատարելու լրացուցիչ հատկացումներ:

4. Համայնքի ղեկավարին՝ ապահովել կապիտալ ծրագրերի նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում, օրենքով սահմանված կարգով կազմակերպել աշխատանքների գնման գործընթացները և ժամանակին ապահովել ծրագրերի կատարումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 10-Ն)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԵԼԻԽԱՆ ՄՈՒՔՈՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՆԱԲԵՐԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ԳԵՂԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՅՈՒՐԻԿ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ԵՎ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԺԱՄԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԱՅԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 03.01.2025 թվականի 01-Լ , 02-Լ և 03-Լ հրամանները, **համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի «Նորաշեն բնակավայրի Վելիխան Մուքոյանի անվան մանկապարտեզ», «Հնաբերդ բնակավայրի մանկապարտեզ»,«Գեղաձոր բնակավայրի Յուրիկ Կիրակոսյանի անվան մանկապարտեզ » և «Ծաղկահովիտ բնակավայրի մանկապարտեզ » համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում աշխատանքային ժամերը սահմանել 08:30-ից մինչև 17:30-ը:
2. Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեններին՝
- Աշխատանքները կազմակերպել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 03.01.2025 թվականի 01-Լ, 02-Լ և 03-Լ հրամաններով հաստատված նախադպրոցական կրթական հիմնական ծրագրերով:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից :

Կողմ-0 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 15-Ն)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ ԾԱՂԿԱՀՈՎԻՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՆՇԱՆԱԿՎԱԾ ՏՈՒԳԱՆՔԸ ՎՃԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 23.12.2024 ԹՎԱԿԱՆԻ N 130-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Արագածոտնի տարածքային բաժնից 14.11.2024 թվականին ստացված թիվ 01/30.2/6/7037 գրությամբ ներկայացված փնասի փոխհատուցման պահանջ ներկայացնելու մասին N ԱԳ/12-24-Վ որոշումը, **համայնքի ավագանին որոշում է՝**

1. ՀՀ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Արագածոտնի տարածքային բաժնի կողմից N ԱԳ/12-24-Վ որոշմամբ նշանակված տուգանքը վճարելու համար համայնքի բյուջեից հատկացնել 9.608.400 / ինը միլիոն վեց հարյուր ութ հազար չորս հարյուր / ՀՀ դրամ :
2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու 23.12.2024 թվականի N 130-Ն որոշումը :
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 16-Ն)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԻԼՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 12-ՐԴ ՓՈՂՈՑ 19 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԳԵՎՈՐԳ ԹՈՐԳՈՄԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԻՍԿ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 0,10523 ՀԱ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԱՐԺԵՔԸ ՎՃԱՐԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՈՎ ՆՐԱՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով Ծիլքար բնակավայրի 12-րդ փողոց 19-րդ հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի տունը նվիրատվության կարգով Գևորգ Թորգոմի Գասպարյանին հանձնելու և բնակելի տան սպասարկման համար նախատեսված 0,10523 հա հողատարածքը կադաստրային արժեքը վճարելու պայմանով նրան օտարելու թույլտվություն տալու մասին Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջարկությունը, **համայնքի ավագանին որոշում է՝**

1. ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Ծիլքար բնակավայրի 12-րդ փողոց 19 հասցեում գտնվող, 02-056-0028-0019 կադաստրային ծածկագրով 0.10523 հա հողատարածք վրա առկա համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի տունը / 86,53 քմ / նվիրատվության կարգով, որպես սեփականություն անհատույց հանձնել նշված տանը փաստացի բնակվող՝ Գևորգ Թորգոմի Գասպարյանին :
2. Թույլատրել համայնքի ղեկավարին բնակելի տան սպասարկման համար նախատեսված 02-056-0028-0019 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, 0.10523 հա հողատարածք կադաստրային արժեքը վճարելու պայմանով օտարելու Գևորգ Թորգոմի Գասպարյանին:
3. Օտարման ենթակա հողատարածքի գին սահմանել՝ տվյալ հողատարածքի կադաստրային արժեքի 100% չափով՝ 1 քմ-ը 141,9 /մեկ հարյուր քառասունմեկ դրամ իննսուն լումա / ՀՀ դրամ:
4. Համայնքի ղեկավարին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով Գևորգ Թորգոմի Գասպարյանի հետ կնքել բնակելի տան նվիրատվության և հողատարածքի առուվաճառքի պայմանագրեր :
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 23-Ն)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԻԼՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 10-ՐԴ ՓՈՂՈՑ 5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԱՆԱՀԻՏ ՋԱՎԵՆԻ ՄԱԼԽԱՍՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԻՍԿ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 0,11909 ՀԱ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԱՐԺԵՔԸ ՎՃԱՐԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՈՎ ՆՐԱՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով Ծիլքար բնակավայրի 12-րդ փողոց 19-րդ հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի տունը նվիրատվության կարգով Անահիտ Զավենի Մալխասյանին հանձնելու, իսկ բնակելի տան սպասարկման համար նախատեսված 0,11909 հա հողատարածքը կադաստրային արժեքը վճարելու պայմանով նրան օտարելու թույլտվություն տալու մասին Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջարկությունը, **համայնքի ավագանին որոշում է՝**

1. ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Ծիլքար բնակավայրի 10-րդ փողոց 5 հասցեում գտնվող, 02-056-0024-0009 կադաստրային ծածկագրով 0.11909 հա հողատարածքի վրա առկա համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի տունը / 88,29 քմ / նվիրատվության կարգով, որպես սեփականություն անհատույց հանձնել նշված տանը փաստացի բնակվող՝ Անահիտ Զավենի Մալխասյանին :
2. Թույլատրել համայնքի ղեկավարին բնակելի տան սպասարկման համար նախատեսված 02-056-0024-0009 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, 0.11909 հա հողատարածքը կադաստրային արժեքը վճարելու պայմանով օտարելու Անահիտ Զավենի Մալխասյանին:
3. Օտարման ենթակա հողատարածքի գինը սահմանել՝ տվյալ հողատարածքի կադաստրային արժեքի 100% չափով՝ 1 քմ-ը 141,9 /մեկ հարյուր քառասունմեկ դրամ իննսուն լումա / ՀՀ դրամ:
4. Համայնքի ղեկավարին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով Անահիտ Զավենի Մալխասյանի հետ կնքել բնակելի տան նվիրատվության և հողատարածքի առուվաճառքի պայմանագրեր :
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 24-Ն)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի , Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 48.1-րդ հոդվածի 6-րդ մասի, 56-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքի սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման հողամասը վարձակալությամբ, կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությունը, **համայնքի ավագանին որոշում է՝**

1. Թույլատրել Ծաղկահովիտ համայնքի ղեկավարին՝ համայնքային սեփականություն հանդիսացող, Ծիլքար բնակավայրում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության ներքոհիշյալ հողատարածքը մրցութային կարգով կառուցապատման իրավունքով տրամադրել վարձակալության, սահմանել մեկնարկային գինը և հավելաճի քայլի չափը՝
- 02-056-0011-0007 կադաստրային ծածկագրով 0,0144 հա հողատարածքը, որի մեկնարկային գին սահմանել 6.000 ՀՀ դրամ, իսկ հավելաճի քայլը՝ 1000 ՀՀ դրամ,
2. Համայնքի ղեկավարին՝ ապահովել մրցույթի հրապարակայնությունը, նախապատրաստել համապատասխան փաստաթղթեր մրցույթը պատշաճ կազմակերպելու և անցկացնելու համար:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 28-Ն)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԻԼՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 9-ՐԴ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ 1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ

ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԱՆԱՍՆԱՇԵՆՔԸ ՎՐՈՒՅՐ ԱՂԱՍՈՒ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով և հիմք ընդունելով Ծիլքար բնակավայրի 9-րդ փողոց 1-ին փակուղի 1 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի տունը և անասնաշենքը նվիրատվության կարգով Վրույր Աղասու Հայրապետյանին հանձնելու մասին Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջարկությունը, **համայնքի ավագանին որոշում է՝**

1. ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Ծիլքար բնակավայրի 9-րդ փողոց 1-ին փակուղի 1 հասցեում գտնվող, 02-056-0007-0002 կադաստրային ծածկագրով 0,14554 հա հողատարածքի վրա գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի տունը / 198,67 քմ / և անասնաշենքը /47,84 / նվիրատվության կարգով, որպես սեփականություն անհատույց հանձնել նշված տանը փաստացի բնակվող՝ Վրույր Աղասու Հայրապետյանին :

2. Համայնքի ղեկավարին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով Վրույր Աղասու Հայրապետյանի հետ կնքել նվիրատվության պայմանագիր :

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 22-Ն)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԻԼՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 12-ՐԴ ՓՈՂՈՑ 17 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՄԱՐՏՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՄԵԼՔՈՆՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԻՍԿ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 0,08936 ՀԱ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԱՐԺԵՔԸ ՎՃԱՐԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՈՎ ՆՐԱՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով Ծիլքար բնակավայրի 12-րդ փողոց 17-րդ հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի տունը նվիրատվության կարգով Մարտուն Հովհաննեսի Մելքոնյանին հանձնելու, իսկ բնակելի տան սպասարկման համար նախատեսված 0,08936 հա հողատարածքը կադաստրային արժեքը վճարելու պայմանով նրան օտարելու թույլտվություն տալու մասին Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջարկությունը, **համայնքի ավագանին որոշում է՝**

1. ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Ծիլքար բնակավայրի 12-րդ փողոց 17 հասցեում գտնվող, 02-056-0028-0020 կադաստրային ծածկագրով 0,08936 հա հողատարածքի վրա առկա համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի տունը / 94,11 քմ / նվիրատվության կարգով, որպես սեփականություն անհատույց հանձնել նշված տանը փաստացի բնակվող՝ Մարտուն Հովհաննեսի Մելքոնյանին :
2. Թույլատրել համայնքի ղեկավարին բնակելի տան սպասարկման համար նախատեսված 02-056-0028-0020 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, 0, 08936 հա հողատարածքը կադաստրային արժեքը վճարելու պայմանով օտարելու Մարտուն Հովհաննեսի Մելքոնյանին:
3. Օտարման ենթակա հողատարածքի գինը սահմանել՝ տվյալ հողատարածքի կադաստրային արժեքի 100% չափով՝ 1 քմ-ը 141,9 /մեկ հարյուր քառասունմեկ դրամ իննսուն լումա / ՀՀ դրամ:
4. Համայնքի ղեկավարին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով Մարտուն Հովհաննեսի Մելքոնյանի հետ կնքել բնակելի տան նվիրատվության և հողատարածքի առուվաճառքի պայմանագրեր :
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 25-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԻԼՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 9-ՐԴ ՓՈՂՈՑ 22 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԷՄԻԼ ՆՎԵՐԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԻՍԿ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 0,09553 ՀԱ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԱՐԺԵՔԸ ՎՃԱՐԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՈՎ ՆՐԱՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով Ծիլքար բնակավայրի 9-րդ փողոց 22-րդ հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի տունը նվիրատվության կարգով Էմիլ Նվերի Մուրադյանին հանձնելու, իսկ բնակելի տան սպասարկման համար նախատեսված 0,09553 հա հողատարածքը կադաստրային արժեքը վճարելու պայմանով նրան օտարելու թույլտվություն տալու մասին Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջարկությունը, **համայնքի ավագանին որոշում է՝**

1. ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Ծիլքար բնակավայրի 9-րդ փողոց 22 հասցեում գտնվող, 02-056-0028-0009 կադաստրային ծածկագրով 0,09553 հա հողատարածքի վրա առկա համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի տունը / 83,84 քմ / նվիրատվության կարգով, որպես սեփականություն անհատույց հանձնել նշված տանը փաստացի բնակվող՝ Էմիլ Նվերի Մուրադյանին :
2. Թույլատրել համայնքի ղեկավարին բնակելի տան սպասարկման համար նախատեսված 02-056-0028-0009 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, 0, 09553 հա հողատարածքը կադաստրային արժեքը վճարելու պայմանով օտարելու Էմիլ Նվերի Մուրադյանին:
3. Օտարման ենթակա հողատարածքի գինը սահմանել՝ տվյալ հողատարածքի կադաստրային արժեքի 100% չափով՝ 1 քմ-ը 141,9 /մեկ հարյուր քառասունմեկ դրամ իննսուն լումա / ՀՀ դրամ:
4. Համայնքի ղեկավարին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով Էմիլ Նվերի Մուրադյանի հետ կնքել բնակելի տան նվիրատվության և հողատարածքի առուվաճառքի պայմանագրեր :
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 26-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱԲԵՐԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, « Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ՀՀ Կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման N 1 հավելվածի 28-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով «ՀԱԼԴԻ Քոնսալթ» սահմանափակ պատասխանատվության ընկերության դիմումի հիման վրա 2025 թվականի փետրվարի 11-ին կայացած հանրային լսման արդյունքները, **համայնքի ավագանին որոշում է՝**

1. Տրամադրել նախնական համաձայնություն « ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված, ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի N 2093-Ն որոշմամբ սահմանված ծրագրում ընդգրկված՝ ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Հնաբերդ բնակավայրի միջնակարգ դպրոցի կառուցման աշխատանքների իրականացմանը:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից :

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 31-Ն)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԷԴԳԱՐ ՄՆՈՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջարկությունը, **համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հաստատել ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի 2024 թվականի տարեկան բյուջեի կատարման վերաբերյալ համայնքի ղեկավարի հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի 1-ի և 2-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 09-Ն)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 24.11.2022 ԹՎԱԿԱՆԻ N 65-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԱՅԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Նորմատիվային իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին որոշում է՝

1. ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու 24.11.2022 թվականի N 65-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝
- որոշման 1-ին կետի բ) ենթակետով նախատեսված մշակույթի, կրթության, սոցիալական և իրավական հարցերի մշտական հանձնաժողովի կազմում «Սյուզաննա Մնոյան » բառերը փոխարինել « Եպրաքսի Մալխասյան» բառերով,
- որոշման 1-ին կետի գ) ենթակետով նախատեսված քաղաքաշինության, հողօգտագործման և գյուղատնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի կազմում «Մյասնիկ Պողոսյան » բառերը փոխարինել « Հարութ Թերջյան» բառերով, « Գևորգ Ղազարյան » բառերը փոխարինել « Սուրեն Սահակյան» բառերով,
- որոշման 1-ին կետի բ) ենթակետով նախատեսված մշակույթի, կրթության, սոցիալական և իրավական հարցերի մշտական հանձնաժողովի կազմում կատարել լրացում հետևյալ բովանդակությամբ՝ Գևորգ Ղազարյան - հանձնաժողովի անդամ
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 14-Ն)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԻԼՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԳԵՎՈՐԳ ՋԱՐՋԱՆԴԻ ՄԽԻԹԱՐՅԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՋԵԿ. ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով հողային ռեֆորմի և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի կողմից 17.03.1991 թվականի թիվ 4 արձանագրությամբ Գևորգ Զարզանդի Մխիթարյանին տրված Ա 085704 համարի հողի սեփականության իրավունքի պետական ակտը, **համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հիմք ընդունելով հողային ռեֆորմի և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի կողմից 17.03.1991 թվականի թիվ 4 արձանագրությամբ Գևորգ Զարզանդի Մխիթարյանին տրված Ա 085704 համարի հողի սեփականության իրավունքի պետական ակտը վերականգնել հատկացված հողատարածքի հիմքերը և ճանաչել նրա սեփականության իրավունքը ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Ծիլքար բնակավայրի 9-րդ փողոց 18 հասցեում գտնվող, 02-056-0028-0007 կադաստրային ծածկագրով 0.10183 հա հողատարածքի նկատմամբ :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 19-Ն)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԻԼՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 9-ՐԴ ՓՈՂՈՑ 18 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԳԵՎՈՐԳ ՋԱՐՋԱՆԴԻ ՄԽԻԹԱՐՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՋԵԿ. ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով և հիմք ընդունելով Ծիլքար բնակավայրի 9-րդ փողոց 18-րդ հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի տունը նվիրատվության կարգով Գևորգ Զարզանդի Մխիթարյանին հանձնելու մասին Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջարկությունը, **համայնքի ավագանին որոշում է՝**

1. ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Ծիլքար բնակավայրի 9-րդ փողոց 18 հասցեում գտնվող, 02-056-0028-0007 կադաստրային ծածկագրով 0.10183 հա հողատարածքի վրա գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի տունը / 176,27 քմ / նվիրատվության կարգով, որպես սեփականություն անհատույց հանձնել նշված տանը փաստացի բնակվող՝ Գևորգ Զարզանդի Մխիթարյանին :

2. Համայնքի ղեկավարին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով Գևորգ Զարզանդի Մխիթարյանի հետ կնքել նվիրատվության պայմանագիր :

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 21-Ն)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՋԵԿ. ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի, ՀՀ «Հողային օրենսգրքի » 67-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջարկությունը **համայնքի ավագանին որոշում է՝**

1. Թույլատրել ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ղեկավարին աճուրդ-վաճառքով օտարելու համայնքային սեփականություն հանդիսացող ներքոհիշյալ հողատարածքները՝

- ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Գեղարոտ բնակավայրի 1-ին փողոց 2/3 հողամաս հասցեում գտնվող, 02-032-0026-0007 կադաստրային ծածկագրով, 0,01889 հա բնակավայրերի նպատակային նշանակության, այլ հողեր գործառնական նշանակության հողատարածքը,
- ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Գեղարոտ բնակավայրի 1-ին փողոց 2/4 հողամաս հասցեում գտնվող, 02-032-0026-0008 կադաստրային ծածկագրով, 0,03745 հա բնակավայրերի նպատակային նշանակության, այլ հողեր գործառնական նշանակության հողատարածքը,
- ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Ծաղկահովիտ բնակավայրի Զորավար Անդրանիկի փողոց 5/7 հողամաս հասցեում գտնվող, 02-053-0001-0102 կադաստրային ծածկագրով, 0,01915 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողատարածքը,
- ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Ծաղկահովիտ բնակավայրի Զորավար Անդրանիկի փողոց 14/2 հողամաս հասցեում գտնվող, 02-053-0009-0074 կադաստրային ծածկագրով, 0,09951 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողատարածքը,
- ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Ծաղկահովիտ բնակավայրի Շիրակի փողոց 1-ին նրբանցք 6 հողամաս հասցեում գտնվող, 02-053-0031-0014 կադաստրային ծածկագրով, 0,03857 հա բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողատարածքը,
- ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Ծաղկահովիտ բնակավայրի Շիրակի փողոց 1/2 հողամաս հասցեում գտնվող, 02-053-0033-0022 կադաստրային ծածկագրով, 0,07003 հա բնակավայրերի նպատակային նշանակության, այլ հողեր հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողատարածքը,
- ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Ծաղկահովիտ բնակավայրի Ա.Շիրակացու փողոց 3/6 հողամաս հասցեում գտնվող, 02-053-0015-0078 կադաստրային ծածկագրով, 0,0142 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողատարածքը,
- ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Ծաղկահովիտ բնակավայրի Ա.Շիրակացու փողոց 10/1 հողամաս հասցեում գտնվող, 02-053-0001-0104 կադաստրային ծածկագրով, 0,02671 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողատարածքը,
- ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Լեռնապար բնակավայրի 02-049-0115-0023 կադաստրային ծածկագրով, 1,75895 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակության հողատարածքը,
- ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Հնաբերդ բնակավայրի 02-065-0112-0027 կադաստրային ծածկագրով, 1,80202 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակության հողատարածքը,

2. Օտարման ենթակա հողատարածքի մեկնարկային գին սահմանել՝ Գեղարոտ բնակավայրի օտարման ենթակա հողատարածքների համար տվյալ հողատեսքի կադաստրային արժեքի 100% չափով՝ 1 քմ-ը 141,9 / մեկ հարյուր քառասունմեկ դրամ իննսուն լումա / ՀՀ դրամ, Ծաղկահովիտ բնակավայրի օտարման ենթակա հողատարածքների համար տվյալ հողատեսքի կադաստրային արժեքի 100% չափով՝ 1 քմ-ը 336,6 / երեք հարյուր երեսունվեց դրամ վաթսուն լումա / ՀՀ դրամ, Լեռնապար և Հնաբերդ բնակավայրի օտարման ենթակա հողատարածքների համար տվյալ հողատեսքի կադաստրային արժեքի 100% չափով՝ 1 քմ-ը 76 / յոթանասունվեց / ՀՀ դրամ: Բոլոր հողատարածքների համար հավելաճի քայլը մեկնարկային գնի 5 /հինգ / տոկոսի չափով:

3. ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ղեկավարին՝ ապահովել աճուրդի հրապարակայնությունը, նախապատրաստել համապատասխան փաստաթղթեր աճուրդ-վաճառքը պատշաճ կազմակերպելու և անցկացնելու համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 29-Ն)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԻԼՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՆՈՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածի պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության կոմիտե կողմից ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Ծիլքար բնակավայրում նոր մանկապարտեզ կառուցելու նպատակով 0,35 հա չափով հողատարածք Հայաստանի Հանրապետության նվիրաբերելու մասին Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջարկությունը, **համայնքի ավագանին որոշում է՝**

1. ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Ծիլքար բնակավայրում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, 02-056-0016-0011 կադաստրային ծածկագրից առանձնացված, Ծիլքար 4-րդ փողոց, 2-րդ նրբանցք 10 հողամաս հասցեում գտնվող 0,35 հա չափով հողատարածքը նվիրաբերել Հայաստանի Հանրապետությանը՝ Ծիլքար բնակավայրում 75 տեղ հզորությամբ նոր մանկապարտեզ կառուցելու համար :

2 . Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 30-Ն)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 24.01.2025 ԹՎԱԿԱՆԻ N 07-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԷԴԳԱՐ ՄՆՈՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, « Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-34-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով « Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին » ՀՀ օրենքով հաստատված հավելված N 2-ում կատարված դոտացիայի գումարի տարբերության վերահաշվարկը, **համայնքի ավագանին որոշում է՝**

1. ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու 2025 թվականի հունվարի 24-ի N 07-Ն որոշմամբ հաստատված համայնքի 2025 թվականի տարեկան բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները ՝

ա/ որոշման 1-ին կետի ա/ ենթակետի «599 063 900 (հինգ հարյուր իննսունինը միլիոն վաթսուներեք հազար ինը հարյուր)» թվերը և բառերը փոխարինել «599 410 800 (հինգ հարյուր իննսունինը միլիոն չորս հարյուր տաս հազար ութ հարյուր)» թվերով և բառերով,

բ/ որոշման 1-ին կետի զ/ ենթակետի «2025 թվականի տարեկան բյուջեի ընդհանուր ծախսերի գծով՝ 731 566 187,4 (յոթ հարյուր երեսունմեկ միլիոն հինգ հարյուր վաթսունվեց հազար մեկ հարյուր ութսունյոթ դրամ քառասուն լումա) ՀՀ դրամ,» թվերը և բառերը փոխարինել «2025 թվականի տարեկան բյուջեի ընդհանուր ծախսերի գծով՝ 731 913 087,4 (յոթ հարյուր երեսունմեկ միլիոն իննը հարյուր տասներեք հազար ութսունյոթ դրամ քառասուն լումա) ՀՀ դրամ» բառերով և թվերով:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 11-Ն)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 26.02.2019 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ ԱՐԱԴ/0039/04/18 ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՎ ՍՆԱՆԿ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ 05.05.2022 ԹՎԱԿԱՆԻ ՎՃՌՈՎ ԱՎԱՐՏՎԱԾ ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՎ ՎԱԶԳԵՆ ՍԱՀԱԿՅԱՆ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՈՒ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի , 39-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի, 90-րդ հոդվածի, ՀՀ « Հարկային օրենսգրքի » 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի , ·251-րդ հոդվածի 5-րդ մասի, 324-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով «Վազգեն Սահակյան» անհատ ձեռնարկատիրոջ վերաբերյալ ՀՀ սնանկության դատարանի ԱՐԱԴ/0039/04/18 սնանկության գործով 26.02.2019 թվականի և 05.05.2022 թվականի վճիռները, **համայնքի ավագանին որոշում է՝** .

1. Դադարեցնել «Վազգեն Սահակյան» անհատ ձեռնարկատիրոջ անվամբ հաշվառված և սնանկության հետևանքով 07. 02.2021 թվականին հրապարակային սակարկություններով օտարված LEXUS LX 450 մակնիշի, 11 OS 911 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի հարկային պարտավորությունները և ազատել մինչև սնանկությունը հաշվարկված և առկա պարտավորություններից՝ 605628 / վեց հարյուր հինգ հազար վեց հարյուր քսանութ / ՀՀ դրամ չափով :
2. Վերը նշված գումարի չափով համայնքի 2025 թվականի տարեկան բյուջեի եկամտային մասում կատարել նվազեցում:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 27-Ն)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 23.12.2024 ԹՎԱԿԱՆԻ N 132-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԷԴԳԱՐ ՄՆՈՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի, 11-րդ հոդվածի , 13-րդ հոդվածի 10-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջարկություն, ***համայնքի ավագանին որոշում է՝***

ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու 23.12.2024 թվականի N 132-Ն որոշումը հաստատել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

1. Ծաղկահովիտ համայնքում սկսել 2025 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթաց:

2. Ծաղկահովիտ համայնքի 2025 թվականի բյուջեում նախատեսել առնվազն քսան տոկոս համաֆինանսավորում:

3. Յուրաքանչյուր առաջարկ - նախագծի իրականացման համար սահմանել առավելագույն սահմանաչափ՝ 15 000 000 / տասնհինգ միլիոն/ ՀՀ դրամ:

4. Սահմանել մասնակցային բյուջետավորման առաջարկների նախնական գնահատման աղյուսակի ձևաթուղթը՝ համաձայն հավելվածի:

5. Սահմանել, որ քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցողների առնվազն մեկ տոկոսի կողմ ձայների դեպքում առաջարկ - նախագիծը համարվում է հաղթած:

6. Մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման համար սահմանվում են բոլոր ոլորտները:

7. Համայնքի ղեկավարին՝

1) սույն որոշման 1-ին կետում սահմանված գործընթացը՝ որպես ծրագրային բաղադրիչ, ներառել համայնքի 2025 թ-ի ՄԺԾԾ-ում, տարեկան աշխատանքային պլանում և բյուջեում:

2) համայնքի բնակիչների կողմից քվեարկության արդյունքում ընտրված առաջարկ(ները) ներկայացնել ավագանու հավանությանը:

3) իրականացնել վերահսկողություն մասնակցային բյուջետավորման գործընթացի նկատմամբ:

8. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 12-Ն)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆՈՐԱՀՆ ՀԱԿՈԲՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի և 62-րդ հոդվածի պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին **որոշում է**.

1. Հաստատել Ծաղկահովիտ համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի 2025 թվականի փետրվարի 18-ի հերթական նիստի օրակարգը՝
2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման վերաբերյալ համայնքի ղեկավարի տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին
3. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին
4. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու 24.01.2025 թվականի N 07-Ն որոշմամբ հաստատված Ծաղկահովիտ համայնքի 2025 թվականի տարեկան բյուջեում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին
5. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու 23.12.2024 թվականի N 132-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և նոր խմբագրությամբ հաստատելու մասին
6. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու կանոնակարգը հաստատելու և Ծաղկահովիտ համայնքի ավագանու 14.11.2022 թվականի N 54-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին
7. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու 24.11.2022 թվականի N 65-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին
8. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի «Նորաշեն բնակավայրի Վելիխան Մուքոյանի անվան մանկապարտեզ», «Հնաբերդ բնակավայրի մանկապարտեզ»,«Գեղաձոր բնակավայրի Յուրիկ Կիրակոսյանի անվան մանկապարտեզ » և «Ծաղկահովիտ բնակավայրի մանկապարտեզ » համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատանքային ժամերը սահմանելու մասին
9. Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Արագածոտնի տարածքային բաժնի կողմից Ծաղկահովիտի համայնքապետարանում իրականացված ստուգման արդյունքում նշանակված տուգանքը վճարելու թույլտվություն համար գումար հատկացնելու և ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու 23.12.2024 թվականի N 130-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին
10. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Նորաշեն, Գեղադիր, Հնաբերդ, Գեղաձոր, Բերքառատ, Ծաղկահովիտ և Լեռնապար բնակավայրերի գազաֆիկացման ներքին ցանցի կառուցման նպատակով կազմված նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ենթարկման և եզրակացության տրամադրման համար գումար հատկացնելու մասին
11. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու 23.12.2024 թվականի N 127-Ն, N 128-Ն և N 129-Ն որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին
12. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Ծիլքար բնակավայրի բնակիչ

Գևորգ Զարգանդի Մխիթարյանին հատկացված հողատարածքի հիմքերը վերականգնելու և նրա սեփականության իրավունքը ճանաչելու մասին

13. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Ծիլքար բնակավայրի բնակիչ Վրույր Աղասու Հայրապետյանին հատկացված հողատարածքի հիմքերը վերականգնելու և նրա սեփականության իրավունքը ճանաչելու մասին

14. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Ծիլքար բնակավայրի 9-րդ փողոց 18 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի տունը Գևորգ Զարգանդի Մխիթարյանին նվիրատվության կարգով հանձնելու մասին

15. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Ծիլքար բնակավայրի 9-րդ փողոց 1-ին փակուղի 1 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի տունը և անասնաշենքը Վրույր Աղասու Հայրապետյանին նվիրատվության կարգով հանձնելու մասին

16. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Ծիլքար բնակավայրի 12-րդ փողոց 19 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի տունը Գևորգ Թորգոմի Գասպարյանին նվիրատվության կարգով հանձնելու, իսկ բնակելի տան սպասարկման համար նախատեսված 0,10523 հա հողատարածքը կադաստրային արժեքը վճարելու պայմանով նրան օտարելու թույլտվություն տալու մասին

17. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Ծիլքար բնակավայրի 10-րդ փողոց 5 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի տունը Անահիտ Զավենի Մալխասյանին նվիրատվության կարգով հանձնելու , իսկ բնակելի տան սպասարկման համար նախատեսված 0,11909 հա հողատարածքը կադաստրային արժեքը վճարելու պայմանով նրան օտարելու թույլտվություն տալու մասին

18. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Ծիլքար բնակավայրի 12-րդ փողոց 17 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի տունը Մարտուն Հովհաննեսի Մելքոնյանին նվիրատվության կարգով հանձնելու , իսկ բնակելի տան սպասարկման համար նախատեսված 0,08936 հա հողատարածքը կադաստրային արժեքը վճարելու պայմանով նրան օտարելու թույլտվություն տալու մասին

19. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Ծիլքար բնակավայրի 9-րդ փողոց 22 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի տունը Էմիլ Նվերի Մուրադյանին նվիրատվության կարգով հանձնելու , իսկ բնակելի տան սպասարկման համար նախատեսված 0,09553 հա հողատարածքը կադաստրային արժեքը վճարելու պայմանով նրան օտարելու թույլտվություն տալու մասին

20. Հայաստանի Հանրապետության սնանկության դատարանի 26.02.2019 թվականի թիվ ԱՐԱԴ/0039/04/18 սնանկության գործով սնանկ ճանաչված և 05.05.2022 թվականի վճռով ավարտված սնանկության գործով Վազգեն Սահակյան անհատ ձեռնարկատիրոջ հարկային պարտավորությունները դադարեցնելու ու հարկային պարտավորություններից ազատելու մասին

21. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը վարձակալությամբ, կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին

22. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին

23. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծիլքար բնակավայրում նոր մանկապարտեզ կառուցելու համար Հայաստանի Հանրապետությանը հողատարածք նվիրաբերելու մասին

24. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Հնաբերդ բնակավայր միջնակարգ դպրոցի կառուցման աշխատանքների իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին

25. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր սահմանելու մասին

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 08-Ն)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԻԼՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ՎՐՈՒՅՐ ԱՂԱՍՈՒ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով հողային ռեֆորմի և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի կողմից 17.03.1991 թվականի թիվ 4 արձանագրությամբ Վրույր Աղասու Հայրապետյանին տրված Ա 093507 համարի հողի սեփականության իրավունքի պետական ակտը, **համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հիմք ընդունելով հողային ռեֆորմի և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի կողմից 17.03.1991 թվականի թիվ 4 արձանագրությամբ Վրույր Աղասու Հայրապետյանին տրված Ա 093507 համարի հողի սեփականության իրավունքի պետական ակտը վերականգնել հատկացված հողատարածքի հիմքերը և ճանաչել նրա սեփականության իրավունքը ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Ծիլքար բնակավայրի 9-րդ փողոց 18 հասցեում գտնվող, 02-056-0028-0007 կադաստրային ծածկագրով 0.10183 հա հողատարածքի նկատմամբ :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 20-Ն)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԱՅԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի պահանջով, Ծաղկահովիտ համայնքի ավագանին, **որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանել 2025 թվականի մարտի 20-ը, ժամը 14:00-ն:

2. Նիստը կազմակերպել Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու նստավայրում, հասցեն՝ գ.Ծաղկահովիտ, Հոկտեմբերյան փողոց 2:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 32-Ն)*

Ավագանու անդամներ

ԱՐԾՐՈՒՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ԲՈՅԱՋՅԱՆ

ԲԱՎԱԿԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆՈՐԱՀԻՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳՈՌ ՀՈՒՆԱՆՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ՂԱՋԱՐՅԱՆ

ՄԻՇԱ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

ՍՈՒՐԵՆ ՍԱՀԱԿՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՆՈՐԱՅԻՆ ՀԱԿՈԲՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Արայիկ Ավետիսյան_____